2725

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«31» 03 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 035 - 26

Նախաձեռնող՝ ***« Հայնախագիծ » ԲԲԸ***

Գործունեությունը՝ ***Կրթահամալիրի կառուցում***
Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Աշուրավան բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 035 - 26

«31» մարտի 2026թ.

Աշոտավան բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (այսուհետ՝ ՇՄԱԳ), նախագիծ
Գործունեության կատեգորիա՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Աշոտավան բնակավայր

Ներածական մաս. Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության Սյունիքի մարզի Աշոտավան բնակավայրում նախատեսվում է իրականացնել կրթահամալիրի կառուցման աշխատանքներ:

Գործունեությունն իրականացվելու է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.855 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Կրթահամալիրը կառուցվելու է գոյություն ունեցող քանդման ենթակա 1295,95 մ² մակերեսով հին դպրոցի տարածքում, որտեղ առկա են հատման ենթակա 10-15 ծառ: Տարածքի հարևանությամբ ամենամոտ շինության հեռավորությունը կազմում է 17,85 մ: Տարածքի ռելիեֆը հարթ է: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 641.5-1651.5 մ սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից մինչև 3 մետր խորությամբ ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները, բնության հուշարձանները, ինչպես նաև զգայուն էկոհամակարգերը, բույսերի և կենդանիների հազվագյուտ և Կարմիր գրքային տեսակները: Բուսահողային շերտը ներկայացված է մոտ 0.2 մ հզորությամբ կավավազային խճով:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերեսը՝ 9785.90 մ²,
- կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 3258 մ²,որից
- կրթահամալիրի կառուցապատման մակերեսը՝ 1980.10 մ²

- մանկական խաղահրապարակի մակերեսը՝ 314.2 մ²,
- բաց սպորտհրապարակի մակերեսը՝ 931.7 մ²,
- ջերմոցի մակերեսը՝ 32 մ²,
- կանաչապատման մակերեսը՝ 5734.7 մ²:

Կրթահամալիրը իրենից ներկայացնում է երեք իրար կցված մասնաշենք՝ երկհարկանի միջնակարգ դպրոց՝ մինչև 144 աշակերտի ուսուցման համար և 80 սանի համար նախատեսված մեկհարկանի մանկապարտեզ: Դպրոցը նախատեսված է 1-ից մինչև 12-րդ դասարանների ուսումնական ծրագրերի իրականացման համար: Նախատեսված են դասասենյակներ, ներառական կրթության սենյակ, տարրական դպրոցի մարզասրահ-խաղասենյակ, կենսաբանության և քիմիայի կաբինետներ՝ օդաքաշ պահարաններով լաբորատորիաներով, ռազմագիտության կաբինետ, հանդիսությունների դահլիճ՝ հանդերձարաններով, տնօրենի աշխատասենյակ, ուսուցչանոց, բժշկի սենյակ, ինչպես նաև տղաների, աղջիկների և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցներ և այլն:

Մանկապարտեզում նախատեսված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ և ննջարաններ երեխաների համար, ինչպես նաև վարիչի և բժշկի սենյակներ՝ մեկուսարանով և դայակների սենյակներ: Սակավաշարժ խմբի երեխաների համար նախատեսված են վերելակ, անհատական պարապմունքների սենյակ և սանհանգույց:

Կրթահամալիրը կապահովվի թեքահարթակներով: Նախատեսված են նաև սանհանգույցներ և այլ պայմաններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

Կրթահամալիրի տանիքը նախատեսվում է իրականացնել մուգ մոխրագույն բիտումային կղմինդրե ծածկով՝ հարթ, կազմակերպված ջրահեռացման համակարգով:Դպրոցի մասնաշենքում նախատեսված է նկուղային հարկ, որտեղ, բացի ընդհանուր նկուղային տարածքից, տեղակայված են գրադարան, խոհանոցային սենյակ, բուժկետ, սանհանգույցներ և օժանդակ սենքեր: Կրթահամալիրի ջերմամատակարարումն ապահովելու նպատակով նկուղային հարկում նախատեսվում է նաև տեղադրել 120 կՎտ ջերմային հզորությամբ երկու էլեկտրական կաթսա:

Նախագծով նախատեսվում է դպրոցի տարածքում տեղադրել 149.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ: ՖՎ վահանակները տեղակայվելու են գրունտային մակերևույթի վրա՝ դեպի հարավ ուղղորդված, 30° հորիզոնական թեքությամբ: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 272 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 24 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Կրթահամալիրի էլեկտրամատակարարումը և էլեկտրաէներգիայի հաշվառումն իրականացվելու է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ փոխադարձ համաձայնության սկզբունքով՝ դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով, եռաֆազ սնուցմամբ: Արևային պանելների տեղադրումն իրականացվելու է համապատասխան սերտիֆիկատ ունեցող ընկերությունների կողմից, որոնց կողմից իրականացվելու է նաև հետագա սպասարկման և շարքից դուրս եկած վահանակների խոտանման աշխատանքները: Շինարարության ընթացքում Ժամանակավոր էլեկտրամատակարարումը կատարվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Շահագործման ընթացքում կրթահամալիրի ջրամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող համակարգի միջոցով՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի

կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն: Կենցաղային կեղտաջրերը բնակային ցանցի միջոցով կհեռացվեն դեպի Տոպս-100 մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, բակտերիալ աղտոտվածության նվազեցումից հետ ոկուղորդվեն կուտակիչ հոր և կօգտագործվեն ոռոգման նպատակով: Ավելցուկային ջրերը կհեռացվեն համակարգի միջոցով:

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոկռունկ, էքսկավատոր, ավտոինքնաթափ և այլն:

Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, նյութեր և այլն: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից ջուրն օգտագործվելու է աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, տրանսպորտային միջոցների անիվների լվացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Խմելու որակի ջուրը կմատակարարվի գոյություն ունեցող դպրոցի գործող ջրագծից: Ջրցանի և անիվների լվացման համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ընդամենը ջրօգտագործումը ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (47 մարդ), ջրցանի և անիվների լվացման համար կկազմի 6787,68 մ^3/շին.ժամ: Շինարարական հրապարակին կից նախատեսվում է տեղադրել պարզարան, որտեղ կուղղորդվեն անձրևաջրերը, անիվների լվացման ջրերը և բետոնաջրերը: Պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի համար, իսկ փոքր քանակներով տիղմը մնացած շինաղբի հետ կտեղափոխվի աղբավայր:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքները կիրականացվեն օրենքով սահմանված կարգով քանդման թույլտվություն ստանալուց հետո և չեն ընդգրկի պայթեցման աշխատանքներ: Քանդման ընթացքում առաջացած թափոնները կտեղափոխվեն Սիսիանի համայնքապետարանի կողմից հատկացված տարածք:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել հողային աշխատանքներ: Ե/բ հիմքերի տեղադրման համար հանվող հողային զանգվածից մի մասը կօգտագործվի հետլիցքի համար, իսկ ավելացած հողային զանգվածը կհեռացվի Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայութուն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարության ընթացքում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կիրականացվի լցվածության աստիճանից ելնելով՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից, պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային կեղտաջրերը բակային ցանցի միջոցով հեռացվելու են դեպի Տոպս-100 մաքրման կայան: Կենսաբանական մաքրման ենթարկված կեղտաջրերը, նվազեցնելով իրենց բակտերիալ աղտոտվածությունը կուղղորդվեն կուտակիչ հոր և կօգտագործվեն ոռոգման համար: Ավելցուկային ջրերը կհեռացվեն դրենաժի միջոցով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները կիրականացվեն Սիսիանի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի

համաձայն: Տնկվելու են նոր ծառեր՝ թխկի՝ 15, տույա՝ 50, բարդի՝ 55 և գնդաձև իլենի՝ 150 հատ:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, ինչպես նաև շինարարական տեխնիկայի և մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ նախատեսվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ միջոցառումների թվում են՝

- մթնոլորտային օդ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների քանակական պարամետրերի չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում՝ պարբերաբար, տարվա շոգ և չոր եղանակներին օրական 2-3 անգամ,
- փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար,
- մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կենսաբազմազանության մշտադիտարկումներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Սյունիքի մարզի Աշոտավան բնակավայրում կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացն իրականացվել է բնապահպանական ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Սյունիքի մարզպետարանը, Սիսիանի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Ամփոփելով նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն տեղայնացված և ժամանակավոր բնույթ, կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման և շահագործման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ բնապահպանական նորմերի ապահովման նպատակով:

- Շինարարական հրապարակի կազմակերպման, շինարարական հրապարակներում փոշու արտանետումները վերահսկելու նպատակով օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրման և փոշենստեցման միջոցառումներն անհրաժեշտ է իրականացնել քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանի պահանջներին համապատասխան, ինչպես նաև պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբի և թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Կանաչապատման նախագիծը ներկայացնել Սիսիանի համայնքապետարան՝ համաձայնեցման՝ ապահովել ՇՄԱԳ-ով նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը, կանաչապատման մակերեսը և խնամքը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ - ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Աշոտավան բնակավայրում կրթահամալիր կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Ռուզան Մակինյան